



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

N 27

10 օգոստոսի 2011թ.
ք. Եղվարդ

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ
ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի 4-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի՝

ԵՂՎԱՐԴԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածի 35 կետով սահմանված գներով քաղաք Եղվարդ, Երևանյան խճուղի 121/1 հասցեում, 0542-0016 ծածկագրի տակ գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0636 հա մակերեսով արդյունաբերության նշանակության արտադրական հողամասը՝ 1869840 դրամ կադաստրային արժեքով, հողամասի վրա կառուցված 34,4 քմ պարիսպը՝ 144480 դրամ գնով օտարելու վերաբերյալ:

Եղվարդի քաղաքային համայնքի ավագանու անդամներ՝

<u>ԿՈՂՄ</u>	<u>ԴԵՄ</u>	<u>ՁԵՌՆՊԱՅ</u>	
 /ստորագրություն/	_____	_____	Վ. Ամիրխանյան
 /ստորագրություն/	_____	_____	Ռ. Զոհրաբյան
 /ստորագրություն/	_____	_____	Յ. Հովհաննիսյան
 /ստորագրություն/	_____	_____	Է. Նիկոլյան
 /ստորագրություն/	_____	_____	Է. Պետրոսյան
 /ստորագրություն/	_____	_____	Խ. Ստեփանյան



Համայնքի ղեկավար Ն. Սարգսյան